

Մարզպետ Կարեն Բոթոյանը հանդիպում ունեցավ հանդբոլի հավաքականի կազմի և „Լավագույն մարզական ընտանիքների,, հետ

14.07.2017

Հուլիսի-14 ին, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանն ընդունեց հուլիսի 17-ից 22-ը Ծաղկաձորում կայանալիք ՀՀ Նախագահի մրցանակի համար կազմակերպվող «Լավագույն մարզական ընտանիք» ամենամյա մրցույթի մարզային փուլում հաղթող ճանաչված 13 ընտանիքներին: Մարզպետը հաջողություն մաղթեց ընտանիքներին գալիք մրցումներում և հույս հայտնեց, որ ոլորտի մասնագետների գլխավորությամբ տևական ժամանակ անցկացված նախապատրաստական աշխատանքները կտան իրենց ցանկալի արդյունքը՝ ավելի բարձր մրցանակային տեղեր զբաղեցնելու համար: Կարեն Բոթոյանը հանձնարարեց նաև կազմակերպել մարզային թիմին երկրպագել ցանկացողների տեղափոխման հարցը, որպեսզի մրցումների ընթացքում թիմի անդամներին տեղում ոգևորելու հնարավորություն ունենան ավելի մեծ թվով մարդիկ: Մարզպետը ընտանիքներին հանձնեց միասնական մարզահագուստ: Հանդիպումն անցավ ջերմ և անկաշկանդ մթնոլորտում:

Նույն օրը Կարեն Բոթոյանն ընդունեց Գեղարքունիքի մարզային մարզադպրոցի հանդբոլի հավաքականի անդամներին: Թիմը հուլիսի 11-13-ը Դիլիջանում մասնակցել է ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների Հանրապետական 26-րդ մարզական խաղերին և գրավել 2-րդ մրցանակային տեղը: Մարզպետը շնորհավորեց մարզիկներին և նրանց մարզիչներին հաղթանակի առթիվ, ակնկալելով հավաքականի անդամներից նորանոր հաղթանակներ նաև՝ Հանրապետությունից դուրս կազմակերպվող մրցաշարերում:

Գեղարքունիքի մարզի հանդբոլի հավաքականի կազմում ընդգրկված են 16-17 տարեկան՝ 12 պատանիներ, որոնք ներկայացնում են Գավառ և Սարուխան համայնքները: Հավաքականի մարզիչներն են Վահան Սարգսյանը և Գնել Թորոսյանը: Հանդիպման ընթացքում մարզի ղեկավարը ոլորտի մասնագետների հետ քննարկեց մարզաձևի զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծման հետ կապված հարցեր: Ի նշան երախտագիտության թիմը իր խրախուսական պարզևր հանձնեց մարզպետ Կարեն Բոթոյանին: